

# ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՈՒ ՄԵՐ ԱՆԵԼԻՔԸ

*Posted on December 31, 2023 by Keghart*



Category: [Opinions](#)



**Գեորգ Լաթալի (Եագղճեան), Երեւան, 24 դեկտեմբեր 2023**

Շուրջ 1140 օր անցաւ 9 նոյեմբեր 2020-ի չարաբաստիկ օրէն, երբ բացայայտուեցաւ վերջին հարիւրամեակի հայկական մեծագոյն սուտը՝ մեր պատրաստ ըլլալը պատերազմին: Շատ անելի դատապարտելի է, որ մեր ՀԱՄԱԶԳԱՅԻՆ աղետը փոխանակ սթափեցնելու հայերս, այս հազարաւոր օրերն ու տասնեակ հազարաւոր ժամերը վատնեցինք զիրար ամբաստանելով պարտութեան համար, ամենուրեք թուրք, դաւաճան, հողատու փնտռելով եւ ... գտնելով (!!!), փողոցներ փակելով կամ զանոնք չափչփելով: ՀՀ-ի իշխանութիւններն ալ, իրենց կարգին, անընդհատ տեղի տուին օտարներու, յատկապէս թրքագոգիներու ճնշումներուն դիմաց, ապացուցելով որ 2018-ի գարնան պատահածը թաւիշ չէր, այլ՝ սովորական փալաս մը, որու վրայ կօշիկ կը սրբեն: Շատ քիչեր շուտ յաղթահարեցին աղետին ցնցահարուածը, սկսան ստեղծուած դառնագոյն վիճակէն ելքեր որոնել եւ անցան գործի:

21-րդ դարի 20-ական թուականներու մեր այսօրուան վիճակը կը համեմատեմ երկրորդ աշխարհամարտէն ետք Գերմանիոյ եւ Ճափոնի օրինակներուն հետ: Ընդամենը 27 տարուայ ընթացքին համաշխարհային երկու պատերազմներէ ԿԱՏԱՐԵԱԼ ԱՆՁՆԱՏՈՒՌԻԹԵԱՄԲ դուրս եկած Գերմանիոյ 8 միլիոն երիտասարդներ սպանուած էին ճակատներուն վրայ, ուրիշ բազում միլիոններ հաշմանդամ դարձած, ուրիշ միլիոններ տարիներով իբրեւ ռազմագերի ծառայած Սովետական Միութեան մէջ, կանանց մէկ մասը բռնաբարուած, քաղաքները քարուքանդ եղած, քանդումէ փրկուած գործարաններուն ամբողջ գոյքը իբրեւ ռազմավար յաղթանակած երկիրներ տարուած... Այդուհանդերձ, Գերմանիա կրցաւ իր մէջքը վերականգնել ընդամենը 10 տարուան ընթացքին, շնորհիւ Քոնրատ Ատենաուերի նման ՆՈՒՐԻԵԱԼ ՂԵԿԱԿԱՐԻ եւ գերմանացի ժողովուրդի կարգապահութեան, կազմակերպուած եւ նուիրեալ աշխատանքին (Մարշալի ծրագիրը գերմանական այդ հրաշքին հետ մեծ առնչութիւն չունի): Աւելին, նոյն այդ նպատակասլաց աշխատանքին շնորհիւ, 44-45 տարի ետք, Պերլինի պատը փոկ եկաւ ու Գերմանիա վերամիացաւ: Պատերազմի գրեթէ բոլոր հետեւանքներն այդպիսով վերացան բացի, անշուշտ, սպանուածներէն: Նոյնպէս, հիվէական երկու ռումբ ստացած եւ պատերազմէն ԿԱՏԱՐԵԱԼ ԱՆՁՆԱՏՈՒՌԻԹԵԱՄԲ դուրս եկած Ճափոնը, ընդամենը մէկ տասնամեակի ընթացքին մէջքը շտկեց ու Գերմանիոյ նման սկսաւ թռիչքածել զարգանալ: Նշուած երկու պետութիւնները 60-ականներուն արդէն նշանակալի ուժ էին համաշխարհային տնտեսութեան մէջ:

Իսկ մենք ի՞նչ ըրինք անցնող 1140 օրերուն ընթացքին: Ժամանակին արժէքը իմացողին համար, ոչ թէ 1140 օրը, այլեւ 1140 երկվայրկեանն իսկ ՀՍԿԱՅ ԺԱՄԱՆԱԿ է: Աստուած իր արարածներէն միայն մարդուն շնորհած է խիղճն ու բանականութիւնը: Եւ Ան այս երկու շնորհները տուած է, որպէսզի մարդը զանոնք օգտագործէ ի բարօրութիւն իրեն եւ ի փառս իր Արարիչին: Անկեղծօրէն հարց տանք եւ նոյնքան անկեղծօրէն պատասխանենք հարցումին՝ իբրեւ հայ ազգ, կը գործածե՞նք այս աստուածային շնորհները, թե՞

թշնամիներով շրջապատուած ըլլալով հանդերձ, ամէն ինչի համար կ'ապաւինինք միայն Աստուծոյ (յիշենք դառն ողբերգապատումը, երբ Աստուած կ'ըսէ պատերազմի հերթական փուլին մէջ յայտնուած եւ Իրեն դիմած հայուն՝ «նորի՞ց Իմ յոյսին էք մնացել...»):

Խոստովանինք՝ հայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը, մասնաւորաբար՝ ամենատարբեր հոգեւոր ու աշխարհիկ ղեկավարութիւնները, կը սիրեն ապրիլ կեղծիքներու եւ պատրանքներու մէջ: Այդպէս շատ լաւ է, պատասխանատուութենէ խուսափելու լաւագոյն միջոց են ատոնք: Իսկ երբ աղետ պատահի՝ բացի հայերէն, միւս բոլոր ազգերն են մեղաւոր, իսկ հայոց մէջ բոլորն են մեղաւոր՝ բացի իրենցմէ...

Մեզ առանձնապէս չեն հետաքրքրեր թշնամիին հետ ուղղակի կամ միջնորդաւորուած բանակցութիւնները, ոչ իսկ հաւանական այսպէս կոչուած «խաղաղութեան պայմանագիր»ը: Մեր առջեւ է Լիբանանի հետ Իսրայելի օրինակը: 1982-ի ամառը Լիբանան ներխուժելէ ու երկրին երկու երրորդը գրաւելէ ետք, սինական տարատնկուած գոյացութիւնը Լիբանանի պարտադրեց 17 մայիս 1983-ի այսպէս կոչուած «խաղաղութեան համաձայնագիր»ը: Սակայն լիբանանցի ժողովուրդին մեծ հատուածը մերժելով մերժեց այդ պայմանագիրը եւ իրար յաջորդած ԱՆՁՆԱՍՊՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ պատմութեան աղբանոցը նետեց այդ թուղթի կտորը, որու մասին այսօր կը յիշեն պատմաբաններն ու քաղաքական գործիչները միայն, իսկ լիբանանցի միջին քաղաքացին լուր իսկ չունի նման զուգարանաթուղթի գոյութենէ: Աւելորդ չէ այստեղ նշել, թէ այդ ֆետայի ազատամարտիկներուն զգալի մասը համայնավար եւ ղովմի գաղափարակիր աղջիկներ էին:

Մեզի համար, Ատրպէյճանի, հաւանաբար նաեւ Թուրքիոյ հետ «խաղաղութեան պայմանագիր»ները, զանոնք չստորագրած իսկ, պետքարանի թուղթ են: Մեզ հետաքրքրողը համահայկական դիմադրական շարժումն է այդ բռնադատուած «խաղաղութեան» դէմ: Այդ հաւանական համաձայնագիրները պիտի տապալին հայութեան անձնուէր հատուածին զոհողութիւններով, ընդհուլ՝ մահապարտական գործողութիւններով:

Ահա թէ ինչո՞ւ, ամբողջ եութեամբ կոչ կ'ընենք աջակցիլ Ազգային Լեգէոն կամաւորական շարժումին, որու պատանի ու նորահաս երիտասարդ անդամները կը թրծուին ազգային գաղափարախօսութեամբ: Հաւատացած ենք, որ պատերազմներու ելքը կ'որոշեն ոչ այնքան զինուժին քանակը, զէնքերու տեսակը, քանակն ու որակը, մէկ խօսքով՝ նիւթական կողմը, որքան ՄԱՐՏԱԿԱՆ ՈԳԻՆ, ՅԱՂԹԵԼՈՒ ԱՆՆԿՈՒՆ ԿԱՄՔԸ: Դեռ ոչ վաղ անցեալին, հիւլէական ռումբ ունեցող պետութիւններ խայտառակ պարտութիւններ կրեցին ազգային ոգիէն ածանցուած մարտական ոգի ու յաղթելու կամք ունեցող ժողովուրդներէ՝ Ֆրանսան՝ Ալճերիոյ մէջ, Ա. Մ. Ն. ը՝ Վիետնամի մէջ, Սովետական Միութիւնը, ապա նաեւ հաւաքական Արեւմուտքը՝ Աֆղանիստանի մէջ...

Ժամանակն է ԱԶԳ-ԲԱՆԱԿ-ի վերածուելու, այդ գաղափարը կեղծիքի ժանգու մաքրելու եւ գործնականացնելու: Դժբախտաբար, ո՛չ ՀՀ-ի այսօրուան իշխանութիւնները, ո՛չ ալ տարատեսակ ընդդիմութիւնները այս գաղափարի կրողն են, առաւել եւս՝ զայն գործնականացնել փափաքողներ: Հայ երիտասարդութիւնը, ըլլայ Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ, պետք է մարզուի ու պատրաստ ըլլայ ՀԱՅ-ԹՐԶԱԿԱՆ ՇԱՐՈՒՄԱԿՈՒՈՂ ՊԱՏԵՐԱԶՄԻ ռազմական յաջորդ շիկացումներուն: Մեր կոչն է սփիւռքահայ երիտասարդութեան. մի՛ լսէք ձեր սնանկացած ղեկավարութիւնները, կաթողիկոս-մաթողիկոսներու սուտ ու փուճ պոռոտախօսութիւններն ու անիմաստ յորդորները, Թղթ Շերեփներով արդիւնքի հասնելու կեղծիքները, եւ գացէ՛ք Հայրենիք, ստացէ՛ք մարտական համակողմանի պատրաստութիւն՝ հետեւելով Ազգային Լեգէոն, ՈՍԱ, ԱԹԱՆ, Ազատագէն, Չանգ, Չարկ, Փոքր Միեր եւ նման՝ շուրջ մէկուկէս տասնեակ կազմակերպութիւններու դասընթացներուն:

**Մեզի պետք է հայկական Համաս, հայկական Հրգապալլահ:** Նկատի ունինք այդ կառոյցներուն գաղափարական ու կազմակերպչական կողմերը, որոնք, մեր համոզումով, առաջնային են զինական, ֆինանսական ու այլ կողմերու հետ համեմատած: Բնական է, որ մեր այս կոչը յառաջացնէ գարշահոտած ու ձախողած դասական ղեկավարութիւններու բուռն հակազդեցութիւնը. տարատեսակ իշխանութիւններ, ներառեալ հայկականներ, միշտ ալ կը սարսափին ոգեկան ուժէն, որ, մեր համոզումով, յաղթանակի հասնելու գլխաւոր գէնքն է:

Այն անբարոյականութիւնը որով համաշխարհային հանրութիւնը դիտեց ու կը շարունակէ դիտել Արցախի եւ Կազախի ողբերգութիւնները, բարոյական ամէն իրաւունք կու տայ հայոց եւ պաղեստինցիներուն՝ ամբողջ աշխարհը յայտարարելու մարտադաշտ, մինչեւ իրենց իրաւունքներուն վերատիրացումը: Եթէ աշխարհը կը դաւանի «Ո՛ւժը կը ծնի իրաւունք» սկզբունքը, նոյն սկզբունքով ալ պետք է շարժին ու գործեն իրաւագրկուած ժողովուրդները: Աշխարհն այսօր չի հասկնար ուրիշ լեզուէ, բացի բիրտ ուժէն: Ի՛նչ միջազգային իրաւունք, ի՛նչ մարդու իրաւունքներ, ի՛նչ միջազգային դատական ատեաններ, ի՛նչ բան... Ատոնք միամիտները թմրեցնելու լօլօներ են պարզապէս...

Թունուզցի արաբ վաղամեռիկ բանաստեղծ, պետական քայլերգի համահեղինակ Ապու Կասեմ ալ-Շապախին (1909-1934) իր մէկ բանաստեղծութիւնը կը սկսի այս տողերով.

*«Եթէ ժողովուրդն օր մը ուզեց ապրիլ, ճակատագի՛րն է որ կ'ենթարկուի անոր, եւ խաւարին անպայման կը յաջորդէ լուսաբացը, եւ շղթաները անպայման կը փշրուին»:*

Իսկ մեր ժողովուրդը որոշած է ապրիլ՝ ի հեճուկս աշխարհի կարծեցեալ տերերուն, թրքազգիներուն եւ մեր տարատեսակ ներքին թէ արտաքին թշնամիներուն:

Իսկ ապրելու եւ գոյատեւելու միակ միջոցը Երկաթէ Շերեփն է:

Մեծ եղբունի նահատակ բանաստեղծ, նոյնպէս վաղամեռիկ Դանիէլ Վարուժան  
(1884-1915) պատգամած է.

*Եւ պայքար, պայքար, պայքա՛ր երգեցի,  
Ձեզի ընծա՛յ, հայ մարտիկներ,  
Գրիչս եղաւ անթրոց սրբտերու հնոցի...  
Ձեզի ընծա՛յ, քաջ մարտիկներ,  
Եղեգնեայ գրչով վրդէ՛ժ երգեցի,  
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:*

## Comments



**Nicolai (Sr.) Romashuk** – 2024-01-01 21:37:09

Լուրջ կ'սե՞ք, առանց մեկ փամփուշտի՞, մեղայ Աստուծոյ: Հազարաւոր Ատրպէյճանցի զոհերը ի՛նչ պատճառով մեռան: 100 միլիոն Թուրքին դեմ կռուիլը դիւրին չէ: Եթէ չեմ սխալիր, բոլոր Արցախցիները կրնային իրենց տուներուն մէջ մնալ, եթէ Ատրպէյճանական քաղաքացիութիւն խնդրէին, ինչպէս այսօրուայ Թրքահայերը, Թուրքիայի մէջ, Ռուս խաղապահ ուժերն ալ անգործ չէին մնար և կարելի եղածին չափ կը հսկէին որ ջարդ տեղի չ'ունենայ, Ատրպէյճանցի քաղաքացիներէն աւելի իրաւունք պահանջելու ժամանակը չէր: Աշխարհի մէջ, ոչ մեկ պետութիւն, Արցախի ազատ հանրապետութիւնը չի ճանչնար, ներարեալ Հայաստանը: Երբ Հայաստանի Վարչապետը ընդունեց որ Արցախը Ատրպէյճան է, մենք միայն մեր կարծիքը կրնանք յայտնել, մեր իրաւունքը սահմանափակուած է: Մեր Անդրանիկները էշ նահատակ երթալու միտք չ'ունին, առանց գիրքի դպրոց չեն երթար, առանց զէնքի ալ պատերազմի չեն երթար:



**Սարգիս** – 2024-01-01 17:06:16

Պրն. Romashuk-ին հարց. ո՞րն են այդ Անդրանիկները: Ընդհակառակը. Վասակներ շատ ունինք: Արցախը առանց մեկ փամփուշտի Կարսի նման թշնամիին յանձնեցինք:



**N. Romashuk** – 2024-01-01 14:29:34

Դժբախտաբար, Եազըճեանի յօդուածը անցեալի անկապ յօդուածներու տխուր շարունակութիւնն է: Մենք, էշ նահատակ երթալէն յոգներ ենք և ուժասսպառ դարձեր ենք, ասոր անոր պարապ սարապ խօսքերուն լսելնուս պատճառով միայն կմախքնիս մնացեր է: Ի՛նչ Համաս, ի՛նչ Հըզպալլահ, մենք Անդրանիկ ունեցեր ենք Անդրանիկ, «թշնամին եթէ միայն Անդրանիկի անունը լսեր, օձի նման իր բոյնը կը մտներ»: Համասն ալ ջախջախուելու է, Հըզպալլան ալ, Լիբանանն ալ, Սուրիան ալ, Եգիպտոսն ալ Եմենն ալ, Հայաստանն ու Իրանն ալ, բոլորը ջախջախուելու են: Առաջին հերթին, մեզի, Համասին, Հըզպալլահին, Հայաստանին թշնամին լաւ ճանաչել է պետք, Ատրպէյճանին զէնքեր և անօդաչու սարքեր վաճառողին, մազէն մինչեւ ոտքերու մատները ճանաչել է պետք, արդիական կործանիչներ արտադրել է պետք, և աշխարհը թալանած անվերջանալի փողերն են պետք, Անդրանիկներ շատ ունինք: